

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԼԱՓԱՐՄ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԿԱԴՐԱՅԻՆ ԳՈՐԾԻ ՎԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

30.03.2012թ.

գ. Ալափարս

Ի կատարումը ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2012 թվականի հունվարի 30-ի N 11-Ա հրամանով հաստատված վարչական հսկողություն իրականացնելու 2012 թվականի աշխատանքային ծրագրի, ՀՀ Կոտայքի մարզպետի 2012 թվականի փետրվարի 22-ի թիվ 10-Ա կարգադրության և մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի 2012 թվականի փետրվարի 28-ի N 27-Ա հրամանի՝ ս. թ. մարտի 27-ից 29-ը ներառյալ Կոտայքի մարզի Ալափարսի գյուղապետարանի աշխատակազմում իրականացվեց վարչական հսկողություն: Վարչական հսկողությունը իրականացվել է ՀՀ փոխվարչապետի 2012 թվականի հունվարի 30-ի N 02-Ն հրամանով հաստատված՝ ՀՀ մարզպետների կողմից իրականացվող վարչական հսկողության իրականացման և կադրային գործի վարման, մեթոդական ուղեցույցի համաձայն: Ուսումնասիրությունները իրականացվել են հետևյալ կազմով՝ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ Ս. Հակոբյան (աշխատանքային խմբի ղեկավար), նույն վարչության՝ ՏԻ և ՀԾ հարցերի բաժնի առաջատար մասնագետ Ռ. Թումոյան, ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության՝ ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Կ. Հունանյան, նույն բաժնի առաջատար մասնագետ Ս. Բաղդասարյան, իրավաբանական բաժնի պետ Ա. Հարությունյան, հողաշինության և հողօգտագործման բաժնի (մարզային հողային պետական տեսչության) գլխավոր մասնագետ Ե. Ավետիսյան, քաղաքաշինության վարչության՝ ճարտարապետաշինարարական բաժնի առաջատար մասնագետ Ա. Վիրաբյան:

Աշխատանքներին մասնակցել են Ալափարսի համայնքի ղեկավար Վ. Վարդանյանը, աշխատակազմի քարտուղար Գ. Հակոբյանը:

Վարչական հսկողությունը ընդգրկել է 2009 թվականի մայիսից մինչև 2012թ. մարտը ընկած ժամանակահատվածը:

ՎԱՐՉԱԿԱՆ ՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Ավագանու լիազորությունների նկատմամբ

1) Ալափարսի համայնքի ավագանին ընտրվել է 2008թ. հոկտեմբերի 12-ին և բաղկացած է 5 անդամներից /օրենքով սահմանված թիվը՝ 7/ իր լիազորությունները ստանձնել է 2008թ.-ի նոյեմբերի 11-ին: Ավագանու անդամներ՝ Սարգիս Ադամյանի և Վահրամ Շառոյանի լիազորությունները օրենքով սահմանված կարգով վաղաժամկետ դադարեցվել են ավագանու համապատասխանաբար 24.02.2011թ. N 2 և 28.02.2012թ. N 2 նիստերին, /մեկ տարվա ընթացքում ավագանու նիստերի կեսից ավելի անհարգելի պատճառով բացակայել են /ՏԻՄ հ. 21, մաս 1. կետ 7//:

2) Ալափարս համայնքի ավագանին իր կանոնակարգը ընդունել է 27.11.2008թ. թիվ 1/1 որոշմամբ: Ավագանու 22.12.2009թ. թիվ 46-Ա, 22.12.2010թ. թիվ 36-Ա որոշումներով սահմանվել են ավագանու համապատասխանաբար 2010 և 2011թթ հերթական նիստերի գումարման օրերը: Ավագանու նիստերը գումարվել են <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի երկրորդ պարբերության պահանջին համապատասխան:

3) Համայնքի ավագանին համայնքի 2009-2012թթ. քառամյա զարգացման ծրագիրը հաստատել է 10.02.2009թ. թիվ 2/1 որոշմամբ, օրենքով սահմանված վերջնաժամկետին: /<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենք հոդված 53, մաս առաջին:/

4) Ավագանու՝ 27.12.2008թ. N 1/2 որոշումով համայնքի ղեկավարի վարձատրության չափ է սահմանվել 180000 դրամ, որը համապատասխանում է օրենքով սահմանված չափին /համայնքի բնակչության թիվը կազմում է մոտ 2500 մարդ, ՏԻՄ հ. 27/, հաջորդ տարիներին համայնքի ղեկավարի վարձատրության չափ չի սահմանվել, այն չի փոփոխվել՝ մնացել է նույնը:

5) Ավագանին օրենքով սահմանված կարգով՝ 31.05.2005թ. թիվ 7/1 որոշմամբ, համաձայնություն է տվել համայնքի ղեկավարի ներկայացրած՝ Ալափարս գյուղի մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում

Մարինա Աթայանին նշանակելու մասին: /ՏԻՄ, հ. 16 մաս 1, կետ 15/: Համայնքի ղեկավարը 01.06.2005թ. թիվ 5 կարգադրությամբ նշանակել է տնօրենին: /Մանկապարտեզի կանոնադրությունը ավագանին հաստատել է 07.01.2005թ. թիվ 1/1 որոշմամբ:/

6) Համայնքային նշանակության փողոցների, պողոտաների, հրապարակների, զբոսայգիների, համայնքային ենթակառուցվածքային կառավարման, մշակութային և այլ հիմնարկների ու կազմակերպությունների անվանման և վերանվանման վերաբերյալ որոշումներ չեն կայացվել:

7) Համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը սահմանված կարգով հաստատվել են ավագանու 10.02.2009թ. N 2/4, 22.12.2009թ. թիվ 43, 22.12.2010թ. N 37 որոշումներով:

8) Ավագանին 27.11.2008թ. N 1/3 որոշումով՝ Ալափարս գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի հաստիքացուցակում կատարել է համապատասխան փոփոխություն և սահմանված կարգով առաջարկությամբ դիմել է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված պետական կառավարման մարմնին՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարությանը՝ Ալափարս գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում /2006 թվականի նոյեմբերի 20-ի N 203-Ս հրամանի հավելված N1-ում/ համապատասխան փոփոխությունը հաստատելու համար: Փոփոխությունը հաստատվել է ՀՀ տարածքային կառավարման նախարարի 15.01.2009թ. N 03-Ս հրամանով:

Համայնքի ղեկավարի իրականացրած լիազորությունների նկատմամբ

1. Ֆինանսների քննազատ

1. Համայնքի բյուջեի նախագծի, դրանում առաջարկվող փոփոխությունների կազմում համայնքի ավագանու հաստատման ներկայացում, բյուջեի կատարման ապահովում և բյուջեի կատարման վերաբերյալ եռամսյա հաղորդումների և տարեկան հաշվետվության ներկայացում համայնքի ավագանուն:

Վարչական հսկողությամբ ներառված ժամանակաշրջանների համար եղել է համայնքի ղեկավարի որոշում՝ բյուջետային գործընթաց սկսելու մասին, որով սահմանվել է գործընթացի կողմ հանդիսացող հիմնարկների գործառնությունները, սակայն բյուջեի նախագիծը կազմվել է առանց բյուջետային ստորադաս կարգադրիչների կողմից բյուջետային հայտեր ներկայացնելու: Իսկ բյուջետային գործընթացը սկսելու մասին որոշումը ընդունվել է <Բյուջետային համակարգի մասին> ՀՀ օրենքով սահմանված ժամկետների խախտումներով: Արդյունքում համայնքի բյուջեի նախագիծը կազմվել և համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացվել սահմանված ժամկետների ուշացումներով: Համայնքի բյուջեում 2009, 2010 և 2011թթ-ին համապատասխանաբար կատարվել են հինգ, երեք և հինգ փոփոխություններ, որոնց համար չկա փոփոխություն կատարելու համար անհրաժեշտ հիմնավորում:

2. Տեղական հարկերի, տուրքերի և վճարների՝ օրենքով սահմանված տեսակների և դրույքաչափերը սահմանելու վերաբերյալ որոշման նախագծերի ներկայացում ավագանու հաստատմանը:

Համայնքի բյուջեն հարկային եկամուտների տեսակներից համալրված է ուղղակի հարկերով՝ հողի հարկ և գույքահարկ, որոնց հաշվառումը, հաշվարկումը և հավաքագրումը իրականացվում է ավտոմատ տեղեկատվական համակարգի միջոցով, իսկ գույքահարկի գծով որևէ արտոնություն ավագանու կողմից չի սահմանվել: Համայնքի ավագանու կողմից տեղական տուրքերի դրույքաչափերը սահմանվել է օրենքով նախատեսված ժամկետներում և չափերով: Այսինքն բյուջեի եկամտային մասում տեղական տուրքերի հաստատվելու համար չկա ստույգ հաշվարկ տեղական տուրքերի տվյալ բյուջետային տարում գանձման ենթակա գումարի վերաբերյալ հիմնավորում, որի համար հիմք կարող է ծառայել տեղական տուրքերով հարկվող օբյեկտների գույքագրման տվյալները:

3. Տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն համարվող հողերի, գույքի վարձավճարների գանձման և վերահսկման իրականացում:

Համայնքի բյուջեի եկամուտների հավաքագրումը բյուջե իրականացվում է ՀՀ կառավարության 2003թ-ի N 750-Ն որոշմամբ սահմանված կարգով և <Դրամարկղային գործառնությունների իրականացման կարգով>: Ընտրանքային կարգով ուսումնասիրվեց գույքային հարկերի գումարները

համապատասխան հաշվին մուտքագրվելու ժամկետները և առանձին դեպքերում առկա են ժամկետների ուշացումներ: Բացի գույքային հարկերից մնացած եկամուտների հավաքագրումը իրականացվել է դրամարկղով, որը վարվում է նշված հարաբերությունները կարգավորող օրենսդրության պահանջներով:

4. Տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով համապատասխան միջոցների կիրառում:

Հսկողությամբ ներառված ժամանակաշրջաններում ինչպես դատական այնպես էլ ժամանակացույցերով հարկային պարտավորությունների մարման գործընթաց չի իրականացվել: Վարձակալական հողերի վարձավճարների գծով պարտատերերի պայմանագրերի լուծարման գործընթաց չի իրականացվել: Ստուգման պահին հողի հարկի գծով ապառքը կազմում է 60247.6 հազար դրամ, իսկ գույքահարկի գծով 17669.9 հազար դրամ, իսկ վարձակալության վարձավճարների գծով 3851.6 հազար դրամ:

5. Համայնքի կողմից իրականացվող ծառայությունների դիմաց կատարվող վճարների դրույքաչափերի վերաբերյալ որոշման նախագծի ներկայացում ավագանու հաստատմանը:

Որպես տեղական վճար համայնքի ավագանու կողմից հաստատվել է բնակչության աղբահանության տեղական վճար, որի դրույքաչափը յուրաքանչյուր բնակչի հաշվով կազմում է 100 դրամ: Այս հաշվով յուրաքանչյուր ամիս բնակչության կողմից հասույթը կազմել է 230.0 հազար դրամ: 2011թ-ին աղբահանության գծով համայնքի բյուջեի պլանը կազմել է 2000.0 հազար դրամ, սակայն փաստացի հավաքագրվել է 123.5 հազար դրամ: Այս վճարը դիտված է որպես ծառայության դիմաց վճար և իրավահարաբերությունները կարգավորվում են պայմանագրային հիմունքներով, որի համար բնակչության հետ պայմանագրեր չեն կնքվել:

6. 2010թ-ին Ալափարսի բնակիչ Է.Համբարձումյանի հետ կնքվել է Ալափարսի 17 փողոցի թիվ 5/1 անշարժ գույքի ձեռքբերման պայմանագիր, որը սպասմունսաժվել է և կառուցվել գյուղամիջյան ճանապարհ: Գույքը գնահատվել է գնահատողների միության կողմից 1300.0 հազար դրամ մեկնարկային գնով և համայնքի կողմից ձեռք բերվել 990.0 հազար դրամի չափով:

Դրամարկղային գործառնությունների նկատմամբ տարված հսկողության արդյունքում պարզվեց, որ 15.05.2009թ-ին համայնքի ղեկավարի N 19/Ա որոշմամբ միջնակարգ դպրոցի 40 շրջանավարտներին տրվել է դրամական օգնություն 2,5 հազարական դրամ՝ 100.0 հազար դրամի չափով: 20.05.2010թ-ին համայնքի ղեկավարի N 22/Ա որոշմամբ 31 շրջանավարտի տրվել է դրամական օգնություն՝ 3.0 հազար դրամի չափով:

Համայնքի դրամարկղից կանխիկ եղանակով ձեռք են բերվել ծառայություններ, տնտեսական ապրանքներ, գրասենյակային և այլ նյութեր, այսպես օրինակ, 2009թ-ի սեպտեմբեր ամսին 9.0 հազար դրամի չափով ձեռք է բերվել տնտեսական նյութեր, 2009թ-ի դեկտեմբեր ամսին վճարվել է պատվիրված նամակների համար՝ 9.2 հազար դրամ և 13.0 հազար դրամ քարթրիջի լիցքավորման նպատակով, 2010թ-ի ապրիլ ամսին վճարվել է 3.5 հազար դրամ՝ տնտեսական ապրանքների համար, 2010թ-ի նոյեմբեր ամսին տնտեսական ապրանքների ձեռք բերման համար՝ 15.0 հազար դրամի չափով, 2011թ-ի դեկտեմբեր ամսին նամակների համար՝ 15.5 հազար դրամ: Գործուղման վճարների նկատմամբ տրված հսկողության արդյունքում պարզվեց, որ 30 կիրմետրը չգերազանցելու դեպքում վճարվել է օրապահիկ, հաշվարկվել և ավել է վճարվել 100.0 հազար դրամի չափով:

2010թ-ի տարեկան բյուջեն համայնքի ավագանու կողմից հաստատվել է 38544.1 հազար դրամ եկամտային մասով, որի դիմաց փաստացի կատարողականը կազմել է 35847.3 հազար դրամ: Ցածր կատարողական է արձանագրվել հողի վարձակալական վճարների գծով, որի փաստացի կատարողականը կազմել է 1998.3 հազար դրամ՝ նախատեսված 2360.0 հազար դրամի դիմաց կամ թերակատարվել է 361.7 հազար դրամի չափով:

2. Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառ

ՀՀ Կոտայքի մարզի Ալափարս համայնքի հողերի օգտագործման և գոտիաորման սխեման մշակվել է ՀՀ Կառավարության 2003թ.-ի դեկտեմբերի 4-ի 1676-Ն որոշմամբ սահմանված կարգին համապատասխան:

1.Ճարտարապետահատակագծային առաջադրանքների առկայությունը և համապատասխանությունը ՀՀ կառավարության 29.09.2002թ N 1473 որոշման պահանջներին:

Համայնքի ղեկավարի կողմից 2009թ-ին տրվել է 5, 2010թ-ին 8 և 2011թ-ին 3 ճարտարապետահատակագծային առաջադրանքներ, որոնք համապատասխանում են ՀՀ կառավարության 29.09.2002թ N 1473 որոշման պահանջներին:

2.Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերի, դրանց փորձաքննության համաձայնեցման և հաստատման ակայությունը՝ համաձայն ՀՀ կառավարության 21.12.1998թ. թիվ 812 և քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության 02.02.2002թ. թիվ 96 որոշումների պահանջներին և համապատասխանությունը գործող օրենսդրությանը:

Համայնքի ղեկավարի կողմից 2009թ-ին համաձայնեցվել է 5; 2010թ-ին 8 և 2011թ-ին 6 ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթեր, որոնք համապատասխանում են գործող կարգին:

3.Շինարարության /քանդման / թույլտվության ակայությունը և համապատասխանությունը ՀՀ կառավարության 02.02.2002թ. թիվ 91 որոշման պահանջներին:

Համայնքի ղեկավարի կողմից 2009թ-ին տրվել է 5; 2010թ-ին 8 և 2011թ-ին 6 շինարարության և 2009թ-ին 2 շինության քանդման թույլտվություններ որոնց տրման կարգը համապատասխանում է ՀՀ կառավարության 02.02.2002թ N91 որոշման պահանջներին:

4.Ավարտված շինարարության շահագործման փաստագրման ակայությունը և համապատասխանությունը ՀՀ կառավարության 08.05.03թ.թիվ 626- Ն որոշման պահանջներին:

Համայնքի ղեկավարի կողմից 2010թ-ին տրվել է 1 և 2011թ-ին 1 շինարարության ավարտը փաստագրող ակտեր, որոնցում բացակայում են կատարողական փաստաթղթերը (շինարարության վարման մատյան,ծածկած աշխատանքների ակտերը):

5.Կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին իրազեկման և հրապարակված քաղաքաշինական ծրագրերի և նախագծերի քննարկմանը և որոշումների ընդունմանը հասարակայության ներկայացուցիչների մասնակցության ապահովումը ՀՀ կառավարության 28.10.1998թ.թիվ 660 որոշմամբ:

Համայնքի ղեկավարի կողմից ծրագրվող փոփոխությունների մասին իրազեկումը և նախագծերի քննարկումը կատարվել է գյուղապետարանի շենքում վահանակների տեսքով:

6.Ինքնակամ շինություններ

Համայնքի ղեկավարի կողմից գործող կարգին համապատասխան 2010թ-ին օրինականացվել է մեկ և 2011թ-ին երկու շինություններ:

7.Կառուցապատման համար կայացված որոշման համապատասխանությունը քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին, իսկ վերջինիս բացակայության կամ փոփոխության դեպքում ՀՀ կառավարության 30.07.1998թ N 478 և 479 որոշումների պահանջներին:

Այլափարս համայնքում գործող կարգի համաձայն 2010թ-ին 519քմ հասարակական կառուցապատման հողակտոր փոփոխվել է բնակելի կառուցապատման:

2011թ-ն 162.4քմ արտադրական նշանակության շինության գործառնական նշանակություն փոփոխվել է բնակելիի:

3. Հողօգտագործման քննազայան

Ստուգմից պարզվեց, որ համաձայն համայնքի հողային հաշվեկշռի համայնքում առկա է՝ 903, 61 հա գյուղ.նշանակության հողեր, որից 119,78 հա վարելահող և 308 հա պետական սեփականություն հանդիսացող գյուղ.նշանակության հողեր:

Վերը նշված տարածքներից վարձակալությամբ հատկացվել է220,4 հա հողատարածք, որից 92,4 հա վարելահող ջրովի ,2,4 հա անջրդի, 98,26 հա արոտ, 27 հա խոտհարք, տարեկան վարձավճարը 2,124290 դրամ, ապառքը 2484338 դրամ:

Ստուգման ժամանակահատվածում համայնքում կայացվել էր համայնքային սեփականության հողերի 2 /երկու/ աճուրդ վաճառք , որի արդյունքում օտարվել էր 2,1 հա գյուղ.նշանակության և 0,03 հա

բնակավայրի նշանակության հողամաս: Կայացված աճուրդ-վաճառքներից համայնքի բյուջե է մուտքագրվել 1,09 մլն. դրամ:

Ստուգման ժամանակահատվածում համայնքում կայացվել էր 2 վարձակալական մրցույթ: Աճուրդ վաճառքները կայացել են ՀՀ հողային օրենսդրության պահանջներին համապատասխան:

- Համայնքի ղեկավարին տրվեց ցուցում, պատվիրել համայնքի պարզեցված գլխավոր հատակագիծը:

4 Տրանսպորտի բնագավառ.

- Համայնքային ենթակայության ճանապարհների, ճանապարհային երթևեկության կազմակերպման կահավորանքի ու այլ տեխնիկական միջոցների, կամուրջների ու ինժեներական այլ կառույցների պահպանման և շահագործման կազմակերպման աշխատանքներից՝ կատարվել են միայն համայնքային ենթակայության ճանապարհների նորոգման և բարեկարգման աշխատանքներ՝ 2011թ. մոտ 19 մլն. դրամ ընդհանուր գումարով:

-Համայնքում՝ համայնքային ենթակայության տրանսպորտային հիմնարկներ և կազմակերպություններ չեն գործում:

5. Առևտրի և ծառայությունների բնագավառ.

-Առևտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտի գործունեության համայնքային նոր կանոնները հաստատվել են ավագանու 03.06.2010թ. թիվ որոշմամբ:

-Համաձայն մարզպետարան ներկայացված տեղեկատվության՝ ստուգվող ժամանակահատվածում, համայնքի տարածքում գործել են 11-12 առևտրի և 1 կենցաղային ծառայության օբյեկտներ: Ուսումնասիրության ժամանակ պարզվեց, որ նշված առևտրի օբյեկտներից 3-ը, համաձայն <<Առևտրի և ծառայությունների մասին>> ՀՀ օրենքի 10, 11 հոդվածների, դասակարգվում են որպես հանրային սննդի օբյեկտներ, գտնվում են Երևան-Սևան միջպետական ավտոճանապարհին հարող տարածքում: <<Առևտրի և ծառայությունների մասին>> ՀՀ օրենքին համապատասխան, անհրաժեշտ է հստակեցնել օբյեկտների դասակարգումը՝ ըստ տեսակների:

-Առևտրի օբյեկտների հսկողություններ ստուգվող ժամանակաշրջանում իրականացվել են, հսկողություն իրականացված օբյեկտներում խախտումներ չեն արձանագրվել:

- Բացօթյա վաճառք կազմակերպելու թույլտվություններ չեն տրամադրվել:

-Համայնքի տարածքում ժամը 24.00-ից հետո աշխատող օբյեկտներ չկան:

- Թանկարժեք մետաղների առուվաճառք համայնքի տարածքում չի իրականացվում:

6. Այլ բնագավառներ

1) 2009թ. գումարվել է ավագանու 12 նիստ, որից 6-ը՝ արտահերթ, 2010թ. 10 նիստ, որից 1-ը՝ արտահերթ, 2011թ.՝ 10 նիստ, որից 3-ը՝ արտահերթ, 2012թ./մինչև ստուգումը/ 2 նիստ, որից 1-ը՝ արտահերթ:

- Ավագանու նիստերին ներկայացած և քվեարկությանը մասնակցած ավագանու անդամների գրանցումներ կատարվել են սահմանված կարգով՝ հատուկ մատյանում:

- Ավագանու նիստերը մինչև 2012թ. արձանագրվել են մատյաններում: Այնուհետև ՀՀ կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 6-ի նիստի N 39 արձանագրային որոշմամբ հաստատված՝ ՏԻՄ-երի կողմից ընդունվող փաստաթղթերի նախագծերի մշակման մեթոդական ուղեցույցը գյուղապետարանին տրամադրելուց հետո, արձանագրությունները կազմվել են մեթոդական ուղեցույցի 7-րդ կետի պահանջներին համապատասխան:

- Ավագանու որոշումները ներկայացվում են անհատական ձևաթղթերի վրա, որոնք հիմնականում համապատասխանում են օրենսդրական տեխնիկայի կանոններին՝ <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 36-45-րդ հոդվածների պահանջներին:

- Մարզպետի համապատասխան գրություններով համայնքի ղեկավարին ներկայացվել են համայնքի ավագանու 2009-2011թթ. որոշումների վերաբերյալ դիտողություններ և առաջարկվել է նշված որոշումներում արձանագրված թերությունները և բացթողումները համապատասխանեցնել գործող օրենսդրության պահանջներին /<<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 36-45-րդ հոդվածների/, որոնք կատարվել են սահմանված կարգով:

ՀՀ կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 6-ի նիստի N 39 արձանագրային որոշմամբ հաստատված՝ ՏԻՄ-երի կողմից ընդունվող փաստաթղթերի նախագծերի մշակման

մեթոդական ուղեցույցը գյուղապետարանին տրամադրելուց հետո՝ որոշումները ձևաթղթերի վրա համապատասխանեցվել են մեթոդական ուղեցույցի 6-րդ կետի պահանջներին:

- Ստուգվող ժամանակահատվածի ավագանու նիստերի որոշումները մարզպետարան են առաքվել օրենքով սահմանված ժամկետում: /<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի 8-րդ կետ:/

- Ավագանու նիստերի մասին և օրակարգերի հրապարակումները իրականացվում են 3 տեղ, 1-ը՝ գյուղապետարանում: /<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենք, 12'-րդ հոդված: Համայնքի բնակչության թիվը կազմում է մոտ 2500 մարդ:/

- Ավագանու որոշումների հաշվառման մատյան /2009-2012 թթ հաշվառված են մեկ մատյանում/ վարվում է, 2009թ. հաշվառվել է 47 որոշում, 2010թ.՝ 39 որոշում, 2011թ.՝ 39, 2012թ. /մինչև ստուգումը/՝ 8 որոշում, կան բացթողումներ՝ լրացված չէ նորմատիվ որոշումները պետական փորձագիտական եզրակացություն տալու մասին սյունակը, /տրամադրվել որոշումների առանձին հաշվառման մատյան չի վարվում/: /ՀՀ կառավարության 11 հուլիսի 2002թ. թիվ 1146-Ն որոշում /հավելված թիվ 2/:

2) Համայնքի ղեկավարը համայնքի 2009-2012թթ. քառամյա զարգացման ծրագիրը ավագանու հաստատման է ներկայացրել 10.02.2009թ.՝ օրենքով սահմանված վերջնաժամկետին: /<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 53-րդ հոդված/:

3) Համայնքի ղեկավարը 12.03.2009թ. թիվ 8 որոշմամբ հաստատել է աշխատակազմի կանոնադրությունը, սահմանված կարգով համապատասխան փոփոխությունները կատարել է 22.09.2011թ. թիվ 73 որոշմամբ (առանձնացված ստորաբաժանում չունի):

4) Աշխատակազմում առկա է քաղաքացիական պաշտպանության պլան:

5) Կազմակերպվել է համայնքի բնակիչների հաշվառում. 2009թ.՝ 2492 մարդ, 2010թ.՝ 2386 մարդ, 2011թ.՝ 2475 մարդ, 2012թ.՝ 2538 մարդ:

6) Համայնքի ղեկավարի կողմից քաղաքացիների ընդունելության օրերը սահմանված են, գրանցումների մատյանը վարվում է սահմանված կարգով: Համայնքի ղեկավարը 11.01.2010թ. թիվ 1 որոշմամբ հաստատել է քաղաքացիների ընդունելության կարգը:

7) Համայնքի գինապարտների գրանցամատյանները վարվում են էլեկտրոնային տարբերակով:

8) Համայնքում գործում է Ալափարս գյուղի մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը /ՀՈԱԿ-ի կանոնադրության պետական գրանցամատյանում գրանցման համարն է 42.210.01742, գրանցման ամսաթիվը 06.02.2006թ., վկայական N 03Ա 070698/: Մանկապարտեզի շենքում իրականացվում են հիմնանորոգման աշխատանքներ: Մինչև նորոգումը մանկապարտեզ հաճախել են մոտ 58 երեխաներ՝ երկու խմբով, աշխատակիցների թիվը՝ 12:

Մանկապարտեզի կանոնադրությունը հաստատվել է ավագանու 15.06.2010թ. թիվ 24 որոշմամբ, այն համապատասխանում է 2002 թվականի դեկտեմբերի 26-ի <<Հայաստանի Հանրապետության նախադպրոցական ուսումնական հաստատություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությանը հավանություն տալու մասին>> N 54 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած <<Հայաստանի Հանրապետության նախադպրոցական ուսումնական հաստատություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությանը:

7. Իրավական հսկողություն

Ուսումնասիրվող ժամանակահատվածում համայնքի ավագանու կողմից 2009 թ. կայացվել է 12 նիստ, 46 որոշում, 2010 թ.՝ 10 նիստ, 39 որոշում, 2011 թ.՝ 10 նիստ, 40 որոշում, 2012թ. 2 նիստ, 4 որոշում: Համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է 2009 թ. 34, 2010 թ.՝ 33, 2011 թ.՝ 33 կարգադրություններ, համապատասխանաբար 03, 73, 38 որոշումներ, աշխատակազմի քարտուղարի կողմից համապատասխանաբար 10, 9, 13 հրամաններ:

Քանի որ ավագանու որոշումները օրենքով սահմանված կարգով առաքվել են մարզպետարան, որոնք ուսումնասիրվել են մարզպետարանի համապատասխան մասնագետների կողմից և արձանագրված թերությունների վերաբերյալ մարզպետի համապատասխան գրություններով առաջարկվել է կարգավորել, դրանք ներկայումս կարգավորված են:

Համայնքի ղեկավարի և աշխատակազմի քարտուղարի իրավական ակտերում արձանագրվել են մի շարք խախտումներ, թերություններ և բացթողումներ:

2009 թ. N 2 որոշումը չունի նորմատիվ հիմնավորում, խախտվել է «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ պարբերության պահանջը, համաձայն որի «Անհատական կամ ներքին իրավական ակտի նախաբանում կամ բովանդակության մեջ պետք է նշվի, թե որ նորմատիվ իրավական ակտի, դրա մասի համաձայն կամ ի կատարումն է ընդունվում»:

2011 թվականի N 2 որոշման մեջ ճիշտ չի գրառվել իրավական ակտերում հիշատակվող ամիս ամսաթիվը և տարեթվերը, խախտվել է <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 13-րդ մասի պահանջը, համաձայն որի <<Իրավական ակտում կիրառվող ամսաթվերում՝ տարեթիվը և ամսաթիվը գրվում են թվերով, իսկ ամիսը տառերով>>: Նույնը կրկնվել է 2011 թվականի NN 4, 5, 6, 13, 47, 76,83,87,91,97,98 որոշումներում:

2009թ. համայնքում սահմանված կարգով վարվում է իրավական ակտերի հաշվառման մատյաններ, որտեղ սահմանված կարգով հաշվառված են համայնքի ղեկավարի կարգադրությունները և որոշումները, որոնք համայնքի ղեկավարի իրավական ակտերի հետ համադրելիս հակասություններ չի արձանագրվել:

Ղիմումներ և գրություններ. Գյուղապետարանի աշխատակազմում վարվում է ղիմումների մուտքի, գրությունների մուտքի և ելքի մատյաններ: 2009 թվականին մուտք է եղել 84, 2010 թվականին՝ 113, 2011 թվականին՝ 78 ղիմումներ, համապատասխանաբար մուտք է եղել 133, 129, 105 ,2012թ.18 և ելք է եղել 264, 314, 243,48 գրություններ: Բոլոր մուտք եղած ղիմումներն ու գրությունները, ինչպես նաև ելք եղած գրությունները գրանցված են ղիմումների մուտքի, գրությունների մուտքի և ելքի մատյաններում, որոնք սահմանված կարգով էջակալված, թելակարված և կնքված են:

Համայնքում ստեղծված է խնամակալության և հոգեբարձության հանձնաժողով, որի անհատական կազմը հաստատվել է համայնքի ավագանու 19.12.2008թ. N2/4 որոշմամբ, հետագայում համայնքի ավագանու 2011թ. ապրիլի 13-ի N17 որոշմամբ փոփոխություն է կատարվել նախկին որոշման մեջ և հաստատվել է հանձնաժողովի նոր կազմ: Ուսումնասիրվող ժամանակահատվածում հանձնաժողովի կողմից գումարվել է 1 նիստ, ընդունվել է երեխային խնամքի հանձնելու որոշում:

Արձանագրված թերությունները և բացթողումները հիմնականում վերաբերվում են իրավական ակտերի օրենսդրական տեխնիկայի կանոններին:

ԿԱԴՐԱՅԻՆ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՄ

1.Համայնքի ղեկավարը 12.03.2009թ. թիվ 8 որոշմամբ հաստատել է աշխատակազմի կանոնադրությունը (առանձնացված ստորաբաժանում չունի), համապատասխան փոփոխությունները կատարել է 22.09.2011թ. թիվ 73 որոշմամբ, որտեղ նշված են ՀՀ օրենսդրությամբ սահմանված բոլոր փոփոխությունները՝ կապված համայնքային ծառայության, պաշտպանության բնագավառի, խնամակալության և հոգաբարձության հետ:

2.Համայնքի ավագանու և աշխատակազմի քարտուղարի իրավական ակտերի հաշվառման մատյանները վարվում են համաձայն սահմանված կարգի:

3. Համայնքի ավագանու և աշխատակազմի քարտուղարի կողմից ընդունված իրավական ակտերը համապատասխանում են իրավական ակտերի հաշվառման մատյանների գրառումների հետ:

4. Համայնքի ղեկավարի աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը սահմանված կարգով հաստատվել են ավագանու 10.02.2009թ. N 2/4, 22.12.2009թ. թիվ 43, 22.12.2010թ. N 37 որոշումներով: Համայնքային ծառայության պաշտոնների մասով հաստիքացուցակը համապատասխանում է ՀՀ տարածքային կառավարման 2006 թվականի նոյեմբերի 20-ի N 203-Ա հրամանով հաստատված՝ Ալափարսի գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկին /N 1 հավելված/: Համայնքային ծառայողների պաշտոնային դրույքաչափերը համապատասխանում են «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի

ու «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին:

5. Համայնքային ծառայողների պաշտոնների նոր անձնագրերը հաստատվել են համայնքի ղեկավարի 04.02.2009թ. թիվ 3 որոշումով, համաձայն հավելվածների:

Համայնքի ղեկավարի 30.03.2010թ. թիվ 11, 05.04.2011թ. թիվ 25, 20.04.2011թ. թիվ 33 որոշումներով գլխավոր, առաջատար և կրտսեր /1.2-1, 2.3-1, 2.3-2, 3.2-2 ծածկագրերի/ պաշտոնների անձնագրերում կատարվել են փոփոխություններ օրենսդրության պահանջներին համապատասխան, կապված նաև համայնքային ծառայության, պաշտպանության բնագավառի՝ զինապարտների հաշվառման մատյանի վարման, խնամակալության և հոգաբարձության հետ:

- Հարկ է նշել նաև, որ համայնքի ղեկավարի 23.03.2012թ. թիվ 15 որոշմամբ, աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերում կատարվել են ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2012 թվականի մարտի 16-ի N 43-Ա հրամանից բխող փոփոխությունները: ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 19.03.2012թ. N 01/17/1468-12 հանձնարարականը, կապված նշված հրամանի կատարման հետ, մարզպետի 20.03.2012թ. N 01/15.1/870-12 գրությամբ ուղարկվել է գյուղապետարան:

6. Աշխատակազմի գլխավոր մասնագետ-գյուղատնտեսի /2.3-2 ծածկագրի/ հաստիքը թափուր է 01.03.2010թ., սահմանված կարգի համաձայն պարբերաբար մրցույթ է հայտարարվել, սակայն դիմորդ չլինելու պատճառով մրցույթը չի կայացել: /ՀՀ տարածքային կառավարման նախարարի 29.08.2006թ. թիվ 13-Ն հրամանով հաստատված՝ համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգի 12-րդ, 83-րդ կետեր/:

7. Աշխատակազմի համայնքային ծառայողների անձնական գործերի վարումը հիմնականում համապատասխանում է ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի նոյեմբերի 7-ի N 20-Ն հրամանով սահմանված՝ համայնքային ծառայողների անձնական գործերը վարելու կարգին:

8. Ավագանու 19.12.2008թ. թիվ 2/5 որոշմամբ հաստատվել է համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովներում ընդգրկված ավագանու անդամների քանակային և անհատական կազմերը /5 անդամ/ /«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխությունները ուժի մեջ են մտել՝ 06.12.2008թ./:

-Սահմանված կարգին համապատասխան մրցութային և ատեստավորման հանձնաժողովի նախագահը /համայնքի ղեկավարը/ 22.12.2008թ. թիվ 36 որոշմամբ հաստատել է մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմերը, հանձնաժողովների կազմի փոփոխություններ են կատարվել 25.08.2009թ. թիվ 34 որոշումով: Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի աշխատակարգային նիստ՝ հանձնաժողովի նախագահի տեղակալի ընտրության, կայացել է 22.05.2009թ., այստեղ կա հակասություն համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատակարգերին, այն կարգավորվում է աշխատակարգերի 3-5 կետերով:

9. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի կողմից հաստատված համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների օրինակելի աշխատակարգերի հիման վրա համայնքի ղեկավարը 22.01.2007թ. թիվ 4 որոշումով հաստատել է համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատակարգերը /հավելված 1, 2/, համայնքային ծառայության օրենսդրության փոփոխությունների հետ կապված, սահմանված կարգով, նշված աշխատակարգերում համապատասխան փոփոխություններ կատարել է 04.02.2009թ. թիվ 4 որոշումով /հավելված 1, 2/:

10. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի կողմից հաստատված համայնքների ղեկավարների աշխատակազմերի աշխատանքային կարգապահական ներքին օրինակելի կանոնակարգի հիման վրա համայնքի ղեկավարը

23.03.2009թ. թիվ 10 որոշմամբ հաստատել է համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատանքային կարգապահական ներքին կանոնակարգը: Կապված աշխատանքային օրենսգրքում կատարված փոփոխությունների հետ՝ կանոնակարգում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարվել են 10.09.2010թ. թիվ 50 որոշմամբ: Կանոնակարգը պատշաճ իրազեկվել է աշխատակազմի աշխատակիցներին:

11. Համայնքի ղեկավարի աշխատակազմում վարվում են համայնքային ծառայության մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված գրանցամատյանները: Մատյանները համարակալված, թելակարված և կնքված են:

12. Աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնները զբաղեցնողների, ինչպես նաև մրցույթի արդյունքներով նշանակվածների, կրթությունը, ստաժը և այլ տվյալները համապատասխանում են համայնքային ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության և տվյալ պաշտոնի անձնագրի պահանջներին:

13. Աշխատակազմի համայնքային ծառայողների գրանցամատյանում (Ձև N 1) նշված չէ 2-րդ կարգի մասնագետի /3.3-1 ծածկագրի/ թափուր հաստիքը: Գրանցամատյանային մյուս տվյալները հիմնականում համապատասխանում են մարզպետարան ներկայացված տվյալներին:

14. Համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացված մրցույթների և համայնքային ծառայողների ատեստավորումների փաթեթների ուսումնասիրությունից պարզվեց, որ մրցույթները և ատեստավորումները հիմնականում անցկացվել են սահմանված կարգերին համապատասխան:

15. Համայնքային ծառայության կրտսեր խմբի պաշտոն /3.3-1/ զբաղեցնող աշխատակազմի համայնքային ծառայողի ատեստավորման նշանակումը կատարվել է համայնքի ղեկավարի 20.04.2009թ. թիվ 13 որոշմամբ, խախտվել է ՀՀ տարածքային կառավարման նախարարի 11.09.2006թ. թիվ 15-Ն հրամանով հաստատված՝ համայնքային ծառայողի ատեստավորման կարգի 11-րդ կետի պահանջը:

-Համաձայն նշված կարգի 11 և 12 կետերի՝ մինչև ընթացիկ տարվա հոկտեմբերի 1-ը աշխատակազմի քարտուղարը հաստատում է հաջորդ տարում հերթական ատեստավորման ենթակա համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի 2-րդ և 3-րդ ենթախմբերի ու կրտսեր պաշտոնների խմբի պաշտոններ զբաղեցնող աշխատակազմի

համայնքային ծառայողների ցուցակը, ինչպես նաև համայնքի ղեկավարի հաստատմանն է ներկայացնում հաջորդ տարում հերթական ատեստավորման ենթակա համայնքային ծառայության գլխավոր պաշտոնների խմբի և առաջատար պաշտոնների խմբի 1-ին ենթախմբի պաշտոններ զբաղեցնող աշխատակազմի համայնքային ծառայողների ցուցակը, որը համայնքի ղեկավարը հաստատում է մինչև ընթացիկ տարվա նոյեմբերի 1-ը:

16. Համայնքի զինապարտների հաշվառման գրանցամատյանները վարվում են էլեկտրոնային տարբերակով: /ՏԻՄ հ36/:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ

ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՀԱԿՈՔՅԱՆ

ԱՆԳԱՄՆԵՐ՝

Ռ. ԹՈՒՄՈՅԱՆ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կ. ՀՈՒՆԱՆՅԱՆ



Ս. ԲԱԴՂԱՍԱՐՅԱՆ

Ե. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Ա. ՎԻՐԱՔՅԱՆ

ԱԼԱՓԱՐՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Ցանկացեալ ակտիւ > արալա Տեկ. օրինակ
առարկութիւններ և քաղաքացիութիւններ չունեն

 - 

/ստորագրություն/

/անուն, ազգանուն/

06. 04

2012 թ.